նորա, ոչ ոք թողին մերձենալ ի նայ, ոչ թէ կարգաւորապէս թաղել՝ այլ եւ ըստ օրինի. զի մնայր յաւուրն Բ՚ի (2 Օքտոբ.) այնպէս ի գետնի, արկեալ ի վերայ նորա կտոր մի խսրի։ Որք ի նոցանէ(*), որ վերասացաւն, յերկուց եւ յերից կանխեալ ընդ առաւօտն երթեալ տեսանել՝ թէ իսկապէս նա՞յ է, և թքանէին զմարմինն մեռեալ և առ ոտն աքացի հարկանէին զգլուխն և զերեսն՝ մեծաւ հայհոյութեամբ հանդերձ։ Եւ այլք ի նսեմ տեղւոջն զմօրուսն այրէին թէ Դո՞ւ ես իշխող մեզ, բախելով զկուրծս՝ Ա՛յ թէ տեսաք զքեզ յայդմ ժամու. առնէին եւ վրէժ ի մեռելոյն։ Եւ խրատեալ զբանդապետսն զի ի ծով արկցեն, որ եւ արարինն. զի առ երեսս ծովուն ի վերայ երեսացն թաւալէր, որում սակի խայտառակ եղաք դրացեաց և ծաղր թշնամեաց այլասեռից՝ յաւուրսն յայնոսիկ։ Ո՞վ մեծի յիմարութեանս՝ ասեմ այնոցիկ, ո՞վ մեծի մոլութեան, եթէ հերձուածող զոր ասացիք նզովս՝ չէր մեծ քան զԱրիոս և զՆեստոր և զայլսն, որոց եղև վրէժխնդիր Աստուած. դուք ընդէ՞ր արենատէր և մարդասպան եղէք ամենայն քաղաքս վասն նորա։ Եթէ չար էր՝ վասն է՞ր ոչ չահեցայք զնա յառաջագէմ գալստեան նորա, և թէ վատ էր, որ ոչ ընդունեցայք և ոչ թողիք յեկեղեցիսդ, վասն որոյ և ել գնաց, ընդէ՞ր և ապա ուր որ գնաց ոչ թողիք մտանել ի բոլոր գիւղսդ և ի քաղաքդ. թուղթս ի վերայ թղթից թէ Մի՛ ընդունիք։ Զի՞նչ առնէր եղկելին. կամէին սոքա թէ տաճկանայր՝ ուրանալով զհաւատն. բայց նա մնայր զաւուրս Իթ՚ անայցելու, մինչև սպանին և հասին ըզձանաց իւրեանց և զի առին ևս վրէժ ի նմանէ. և նորայն դատաստան առ Տէր մնաց, զոնէ թողութիւն մեղացն գտանելով։ Եւ զհաբեղան ասա-

(*) յԱՃՅՆցիք։